ԵՄ «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագիր/ “EULEAD4Lori and Tavush Regions” project

Ծրագրի տևողություն՝ 01/11/2020 – 01/11/2024 (48 ամիս)
Ծրագրի բյուջեն՝ 6,603,000 Եվրո
Իրականացնող գործընկերներ՝ ՄԱԶԾ, ՊԳԿ

ԵՄ «Տեղական դերակատարների զորեղացում հանուն զարգացման Լոռու և Տավուշի մարզերում» ծրագիրը ֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից և իրականացվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից՝ ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության գործընկերությամբ և ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սերտ համագործակցությամբ: Ծրագիրն աշխատում է նաև ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ: Ծրագիրն իրականացվում է Հայաստանի Լոռու և Տավուշի մարզերում՝ որպես Եվրոպական միության «LEADER» / Համայնքի կողմից առաջնորդվող տեղական զարգացման (ՀԱՏԶ) հայեցակարգի մաս:

Ծրագիրն աջակցում է Լոռու և Տավուշի մարզերի բնակչությանն ակտիվ դերակատարում ունենալ ներառական, ճկուն և կայուն տեղական զարգացման գործընթացում՝ բնակիչներին ընդգրկելով զարգացման օրակարգերի մշակման, որոշումների կայացման և իրականացման միջոցառումներում:

Ծրագրի նպատակներն են՝

1. Համախմբել, կարողություններով օժտել և խթանել տեղացի դերակատարներին՝ Լոռու և Տավուշի մարզերում համայնքների կարիքների վրա հիմնված ռազմավարություններ մշակելու նպատակով
2. Աջակցող ենթակառուցվածք ձևավորել՝ Լոռու և Տավուշի մարզերում տեղական մակարդակում մշակվող նախաձեռնություններն առաջնահերթ ճանաչելու, իրագործելու և հարատևելի դարձնելու համար:
3. Բարելավել համապատասխան նախարարությունների և այլ մարմինների կարողությունները և պետական քաղաքականության մեխանիզմներ մշակել հանրապետական մակարդակում՝ LEADER մոտեցումը Հայաստանում բարեհաջող կերպով փորձարկելու և հարատևելի դարձնելու նպատակով (պետական քաղաքականությանը վերաբերող բաղադրիչ):

Ծրագրի մեկնարկից մինչ 2021 թ.-ի ավարտը կատարվել են հետևյալ գործողությունները՝

- Ուսումնասիրություն Տեղական ակտիվ խմբերի (ՏԱԽ) գործընկերային մոդելի իրականացման իրավական դաշտի ձևավորման հնարավորությունների վերաբերյալ:
- Հանրային իրազեկում Լոռու և Տավուշի մարզերի համայնքային 10 փնջում՝ ընդգրկելով ավելի քան 185 բնակավայր:
- Կատարվել է ազգային, միջազգային և տեղական շահագրգիռ կողմերի քարտեզագրում:
- Իրականացվել է ուսուցում համայնքային քոուչերի համար և գործընկեր կազմակերպության հետ պայմանագիր է կնքվել՝ թիրախային համայնքներում քոուչինգ կազմակերպելու նպատակով:
- Նպատակ ունենալով օժանդակել Քովիդ-19 համավարակից տուժած գյուղական բնակչությանը՝ Ծրագիրը մրցութային կարգով տրամադրել է կարի մեքենաներ թիրախային բնակավայրերում խոցելի իրավիճակում հայտնված կանանց, հացամթերքի արտադրման սարքավորումներ՝ այդ ոլորտում գործող մեկ տասնյակից ավելի ձեռներեցների, կթի սարքեր, կարտոֆիլի սերմնացու և այլն: Իրականացվել են փակ և բաց գրունտում բանջարաբոստանային մշակաբույսերի մշակության վերաբերյալ խորհրդատվություններ և գործարկվել է թեժ գիծ՝ խորհրդատվությունների շարունակելիությունն ապահովելու նպատակով: Առաջիկայում բաշխվելու են նաև գյուղատնտեսության մեջ կիրառվող սարքավորումներ:



Ծրագրի առանցքը տարբեր շահագրգիռ կողմերի (պետական, մասնավոր, քաղաքացիական հասարակություն) ամուր գործընկերությունն է, որի արդյունքում ձևավորվել է միջոլորտային և բազմաշահառու գործընկերություն՝ հինգ **Տեղական ակտիվ խմբերի** (**ՏԱԽ**) միջոցով:

Լոռու և Տավուշի մարզերում ձևավորված ՏԱԽ-երն են՝

- ՏԱԽ 1, որը ներառում է Լոռու մարզի Տաշիր, Մեծավան, Սարչապետ և Լոռի Բերդ համայնքների 24 բնակավայր
- ՏԱԽ 2, որը ներառում է Լոռու մարզի Փամբակ, Թումանյան և Գյուլագարակ համայնքների 29 բնակավայր
- ՏԱԽ 3, որը ներառում է Լոռու մարզի Ալավերդի, Ախթալա, Շնող և Նոյեմբերյան համայնքների 23 բնակավայր
- ՏԱԽ 4, որը ներառում է Տավուշի մարզի Իջևան համայնքի 15 բնակավայր
- ՏԱԽ 5, որը ներառում է Տավուշի մարզի Բերդ համայնքի 9 բնակավայր

Ներկայումս ծրագրի փորձագետներն աշխատում են ՏԱԽ-երում ձևավորված աշխատանքային խմբերի անդամների հետ՝ տարածքային զարգացման ռազմավարություններ մշակելու նպատակով՝ հիմնվելով ՏԱԽ-երում ներառված բնակավայրերի ուժեղ և թույլ կողմերի, առկա մարտահրավերների, զարգացման ներուժի ու միտումների վրա: 2022 թ.-ին ՏԱԽ-ի անդամների համար նախատեսվում են ուսումնական այցեր «LEADER»/ ՀԱՏՋ մեթոդոլգիայով հաջողության փորձ գրանցած ԵՄ երկրներ:

Ծրագրից ակնկալվող արդյունքներն են՝

- 5 Տեղական ակտիվ խմբի (ՏԱԽ) ձևավորում և տարածքային զարգացման առնվազն 5 ռազմավարական ծրագրի մշակում:
- Շուրջ 1000 բնակչի համապատասխան հմտությունների զարգացում՝ տեղական զարգացմանն ակտիվորեն նպաստելու համար:
- Մարզային և կենտրոնական կառավարման մարմինների 70 ներկայացուցչի հմտությունների կատարելագործում:
- 150 տեղական նախաձեռնության ֆինանսավորում:
- Քովիդ-19 համավարակի հետվերականգնողական միջոցառումների շրջանակներում աջակցության տրամադրում 160 ընկերության, 200 նոր աշխատատեղի ստեղծում, աջակցության տրամադրում առնվազն 3000 տեղացի բնակչի:

Ծրագրի մասին կարող եք իմանալ ավելին՝ դիտելով ծրագրի վերաբերյալ անիմացիոն տեսանյութը՝
https://youtu.be/Gv4EmNMg25I

Քովիդ-19 համավարակի արդյունքում ցուցաբերված միջոցառումների մասին դիտեք ստորև՝
https://youtu.be/uRC3Na7gQPk

Ծրագրի ընթացիկ գործունեությանը կարող եք ծանոթանալ ծրագրի սոցիալական էջերից՝
https://www.facebook.com/EULEAD4LoriTavush/
EULEAD4Lori&Tavush (@LEADLoriTavush) / Twitter